

**«Հաստատում եմ»
ՀՖՖ առաջին փոխնախագահ,
գործադիր տնօրեն**

Ա. Մինասյան

05.09.2012



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖՈՒՏԶԱԼԻ 2012-2013թթ.
ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ
Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

ԵՐԵՎԱՆ – 2012

Գլուխ 1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Յոդված 1. Կանոնակարգի նպատակը

Սահմանել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» (այսուհետ՝ ՀՖՖ) իրավաբանական անձանց միության հովանու ներքո անցկացվող ֆուտբոլի ՀՀ առաջնության (այսուհետ՝ Առաջնություն) կազմակերպման և անցկացման սկզբունքները, Առաջնությանը մասնակցած իրավաբանական և ֆիզիկական անձանց (այսուհետ՝ ֆուտբոլային սուբյեկտներ) իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավահարաբերությունները:

1. կանոնակարգել Առաջնության ղեկավարումը, կազմակերպումը և անցկացումը համաձայն ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի եւ ՀՖՖ-ի հիմնարար փաստաթղթերի պահանջների:
2. Ստեղծել լիարժեք պայմաններ Առաջնության մասնակիցների համար:

Յոդված 2. Առաջնության նպատակը

1. Նպաստել ֆուտբոլի հետագա զարգացմանը Հայաստանում:
2. Նպաստել ֆուտբոլիստների վարպետության մակարդակի բարձրացմանը:
3. Նպաստել միջազգային մրցաշարերում ազգային հավաքականների և ակումբային թիմերի հաջող ելույթներին:
4. Դասակարգել մասնակից թիմերն՝ ըստ Առաջնության արդյունքների:
5. Ի հայտ բերել մրցաշրջանի լավագույն ֆուտբոլիստին, ռմբարկուին և մրցանակակիրներին:

Գլուխ 2. ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Յոդված 3. Մրցումների ղեկավարումը

1. Առաջնության ընդհանուր ղեկավարումն, անցկացումն ու հսկողությունն իրականացնում է ՀՖՖ-ն, որը մասնավորապես՝
 - հաստատում է Առաջնության կանոնակարգն ու խաղացանկը,
 - իրականացնում է թիմերի հայտավորման ընթացակարգը,
 - կազմակերպում է խաղերը և իրականացնում դրանց հսկողությունը,
 - հաստատում է Առաջնությունը սպասարկող մրցավարների, եւ տեսուչների կազմը
 - ամփոփում է հանդիպումների արդյունքները,
 - հաստատում է առաջնության արդյունքները և իրականացնում մրցանակակիրների պարգևատրումը,
 - իրականացնում է կանոնակարգի պահանջներից բխող այլ գործառույթներ:

Յոդված 4. Առաջնություն մասնակից թիմերը, մուտքավճարները և հավաստագրերը

1. Առաջնությանը կարող են մասնակցել այն կազմակերպությունները, /մարզադպրոցները, ակումբները՝ անհատների թիմերը/՝ /այսուհետև Ակումբներ/, որոնք ընդունում են ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՀՖՖ-ի հիմնարար սկզբունքները պարտավորվում են կատարել սույն կանոնակարգի պահանջները, մուծում են մուտքավճար՝ եւ այլ պարտադիր վճարներ:
2. Առաջնության մասնակցության մուտքավճարն է հարյուր տաս հազար /110 000/ դրամ,
3. Առաջնությանը մասնակցել ցանկացող Ակումբները գրավոր հաստատում են իրենց մասնակցությունը՝ մինչև ս/թ սեպտեմբերի 10-ը՝ ներկայացնելով սահմանված ձևի հավաստագիրը և մուտքավճարի մի մասի՝ 30 000 /երեսուն հազար/ դրամի մուծման անդորրագրի պատճեն, իսկ հայտերի հետ՝ /մինչև 25.09.12թ/ մնացած 80000 /ութսուն հազար/ դրամի վճարման անդորրագիրը:

4. Առաջնությանը մասնակցելուց հրաժարվելու կամ սույն կանոնակարգի պահանջների խախտման համար առաջնությունից հեռացվելու դեպքում մուծված գումարները ետ չեն վերադարձվում:

Հոդված 5. Խաղերի անցկացման վայրը

1. Առաջնության մասնակից թիմերը մրցակցին ընդունում են «Հավաստագրում» նշված մարզադահլիճներում, ինչը արտացոլվում է խաղացանկում:
2. Մարզադահլիճները պետք է ընդունված լինեն ՀՖՖ-ի կողմից:
3. Խաղացանկի հաստատումից հետո հանդիպումն այլ մարզադահլիճ տեղափոխելու և/կամ անհրաժեշտության դեպքում խաղասկզբի ժամը փոխելու համար Ակումբը պարտավոր է գրավոր դիմել ՀՖՖ ոչ ուշ, քան 3 օր հանդիպումից առաջ:
4. Մարզադահլիճի ընդունման գործընթացը պետք է ավարտվի ոչ ուշ, քան Առաջնությունը սկսելուց 15 օր առաջ:
5. Յուրաքանչյուր խաղին տվյալ մարզադահլիճի պատրաստ լինելը որոշում է խաղի մրցավարը՝ մինչխաղային խորհրդակցության ժամանակ:

Հոդված 6. Առաջնության համակարգը

1. Առաջնությունն անցկացվում է շրջանաձև մրցակարգով, 4 շրջանով (երկու փուլով՝ առաջին փուլ՝ առաջին - երկրորդ շրջան, երկրորդ փուլ՝ երրորդ - չորրորդ շրջան) աշուն-գարուն սխեմայով: Թիմերը հանդիպում են միմյանց հետ երկուական անգամ՝ սեփական եւ մրցակցի մարզադահլիճներում:
2. Հաղթանակի համար տրվում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1 միավոր, պարտության դեպքում միավոր չի տրվում:

Հոդված 7 Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը

1. Թիմերը Առաջնության աղյուսակում դասակարգվում են ըստ վաստակած միավորների:
2. Երկու եւ ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում Առաջնության հաղթողը որոշվում է լրացուցիչ խաղով (խաղերով), որի (որոնց) անցկացման ժամկետները եւ կարգը որոշում է ՀՖՖ-ն: Մնացած դեպքերում թիմերի դասակարգման ժամանակ առավելությունը տրվում է այն թիմին, որը.
 - 2.1. առաջնության բոլոր խաղերում ունի ավելի շատ հաղթանակ,
 - 2.2. հավակնորդ թիմերի հետ խաղերում վաստակել է ավելի շատ միավոր,
 - 2.3. հավակնորդ թիմերի հետ խաղերում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
 - 2.4. վիճակահանությանը:

Հոդված 8. Խաղերի կազմակերպումը, ֆուտբոլիստների մասնակցությունը և փոխարինումը

1. Յուրաքանչյուր խաղից 1 ժամ առաջ հանդիպման տեսուչի ղեկավարությամբ անցկացվում է մինչխաղային խորհրդակցություն, որին մասնակցում են հանդիպումը սպասարկող մրցավարական խումբը, մարզադահլիճի տնօրինության ներկայացուցիչը, մրցակից թիմերի ներկայացուցիչները, ոստիկանության ներկայացուցիչը: Ոստիկանության աշխատակիցի մասնակցությունը մինչխաղային խորհրդակցությանը ապահովում է հյուրընկալող թիմը /ակումբը/:
2. Թիմերի ներկայացուցիչները պարտավոր են խաղը սկսելուց ոչ ուշ, քան 35 րոպե առաջ խաղի լրացված ու ստորագրված արձանագրությունը, ինչպես նաև ֆուտբոլիստների անձնագրերն ու պաշտոնյաների անձնական քարտերը հանձնել 3-րդ մրցավարին: Խաղից հետո քարտերն ու անձնագրերը վերադարձվում են:
3. Խաղի արձանագրությունում լրացվում են ոչ ավելի, քան 12 ֆուտբոլիստի եւ 3 պաշտոնյայի տվյալներ: Արձանագրությունում նշվում են միայն այն ֆուտբոլիստների

և պաշտոնյաների տվյալները, որոնք հայտավորված են տվյալ թիմում և որակազրկված չեն:

4. Խաղին կարող են մասնակցել և տեխնիկական գոտում գտնվելու իրավունք ունեն միայն արձանագրությունում նշված ֆուտբոլիստները:
5. Չհայտավորված, որակազրկված, արձանագրությունում չնշված ֆուտբոլիստին խաղին մասնակից դարձնելու պատասխանատվությունը կրում է համապատասխան ակումբը՝ անկախ վերջինիս մասնակցության ժամաքանակից:
6. Թիմերի մարզիչները որպես ֆուտբոլիստ հանդես գալու իրավունք չունեն:
7. Առանց թիմի պաշտոնյայի խաղը չի անցկացվում:
8. Առաջնությանը մասնակցելու իրավունք ունեն 17 տարին լրացած ֆուտբոլիստները: 15-ից մինչև 17 տարեկան ֆուտբոլիստները կարող են մասնակցել միայն մարզաբժշկական դիսպանսերի (կենտրոնի) հատուկ թույլտվությամբ:
9. Խաղասկզբին բժշկի, ոստիկանության աշխատակիցների /համազգեստով/ համապատասխան թվակազմի բացակայության դեպքում խաղը չի անցկացվում:
10. Առաջնության խաղերին դարպասացանցերը պարտադիր են:

Չոդված 9. Խաղային մարզահագուստը

1. Ֆուտբոլիստների մարզահագուստը պետք է համապատասխանի «Ֆուտզալ խաղի կանոնների» պահանջներին:
2. Խաղասկզբից 30 րոպե առաջ 3-րդ մրցավարը թիմերի հանդերձարաններում ստուգում է խաղացողների հանդերձանքը:
3. Թիմերի բժիշկները, մերսողները պետք է լինեն մարզահագուստով: Այլ հագուստով խաղահրապարակ մտնել չի թույլատրվում:
4. Մրցող թիմերի մարզահագուստների գույները հաստատվում են մրցավարի կողմից՝ մինչև խաղային խորհրդակցության ժամանակ: Գույների համընկնման դեպքում մարզահագուստը փոխում է հյուրընկալող թիմը:
5. Մարզահագուստի վրա թույլատրվում է տեղադրել գովազդ, որը չի պարունակում քաղաքական, ռասայական, կրոնական տարրեր:
6. Խաղացողներին արգելվում է խաղի ժամանակ կրել ցանկացած տիպի զարդեղեն:

Չոդված 10. Առաջնության խաղացանկը և անցկացման ժամկետները

1. Ակումբի երկու պաշտոնական խաղերի (ներառյալ առաջնության, ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերի եւ ՀՀ հավաքականների հանդիպումները) միջև ընկած ժամանակահատվածը պետք է լինի ոչ պակաս, քան 72 ժամ:
2. Այն թիմերը, որոնք 2 և ավելի խաղացողներ են գործուղել ՀՀ հավաքական, իրավունք ունեն հանդիպումը հետաձգելու համար գրավոր դիմել ՀՖՖ ոչ ուշ, քան հանդիպումից 3 օր առաջ:
3. Առանձին դեպքերում հաստատված խաղացանկի խաղերի տեղափոխության իրավունքը վերապահված է ՀՖՖ-ին:
4. Առաջնության անցկացման ժամկետներն են.

առաջին փուլ
երկրորդ փուլ

2012թ սեպտեմբեր -- դեկտեմբեր
2013թ. մարտ -- հունիս

Չոդված 11. Ակումբների պատասխանատվությունը

1. Ակումբները պատասխանատու են իրենց ֆուտբոլիստների և վարչական անձնակազմի գործողությունների համար:
2. Ակումբները պատասխանատու են իրենց հանդիսականների (թիմի երկրպագուների) գործողությունների համար:
3. Ակումբները պարտավոր են վարել ֆուտբոլիստների ստացած դեղին քարտերի հաշվառումը և կիրառել Կարգապահական Կանոնակարգի 21-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի պատժամիջոցները առանց կարգապահական կոմիտեի որոշման:
4. Ակումբները պատասխանատու են արձանագրությունում նշված ֆուտբոլիստների և պաշտոնյաների՝ խաղին մասնակցելու իրավասության համար: Արձանագրությունում նշված լինելը համարվում է մասնակցություն խաղին:

5. Ակումբների դեկավարները պարտավոր են տարեկան առնվազն մեկ անգամ ապահովել իրենց ֆուտբոլիստների բժշկական հետազոտությունը:
7. Ակումբները, բացառությամբ առանձին գրավոր համաձայնությունների, որևէ կերպ չեն կարող օգտագործել ՀՖՖ-ի էմբլեմը (լոգոն), ՀՖՖ-ի դրոշմը:

Հոդված 12. «Հյուրընկալող» ակումբի /թիմի/ պարտականությունները

1. «Հյուրընկալող» Ակումբը պարտավոր է մարզադահլիճում ապահովել՝
 - 1.1 Մրցավարների համար առանձնացված եւ անհրաժեշտ գույքով կահավորված սենյակ (տաք ջրով առնվազն մեկ ցնցուղարան, մեկ զուգարան, մեկ սեղան, չորս աթոռ և կախիչներ), անհրաժեշտ սարքավորումներ՝ ցուցատախտակ՝ տուգանային խախտումների միավորները ցուցադրելու համար, հատուկ ժամացույց /խրոնոմետր/: ժամացույցի բացակայության դեպքում խաղը չի անցկացվում:
 - 1.2 խորհրդակցության սենյակ (մինչև խաղային խորհրդակցության համար),
 - 1.3 մասնակից թիմերի համար կահավորված հանդերձարաններ (տաք ջրով ցնցուղարան, զուգարան),
 - 1.4 վնասվածք ստացած ֆուտբոլիստների խաղադահլիճից տեղափոխելու միջոց /պատգարակ/,
 - 1.5 հյուր թիմի մարզասերների համար (անհրաժեշտության դեպքում) առանձնացված տեղեր տրիբունաներից մեկում,
 - 1.6 խաղը տեսագրողների համար համապատասխան տեղեր,
 - 1.7 Առաջնության խաղերին տեսագրումը պարտադիր է հյուրընկալող ակումբի համար,
 - 1.8 խաղը պետք է տեսագրվի ամբողջությամբ /առանց համակցելու/՝ մրցավարների եւ թիմերի՝ խաղադահլիճ մուտք գործելուց մինչև խաղադահլիճից հեռանալը, ինչպես նաև խաղի ընթացքում տեղի ունեցած միջադեպերը: Խաղի օրվա և ժամի լուսագիրը տեսագրության ողջ ընթացքում պարտադիր է:
 - 1.9 Անհրաժեշտության դեպքում տեսագրությունը պետք է ներկայացվի ՀՖՖ-ի մամուլի քարտուղարություն ոչ ուշ, քան մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 14:00-ը,
 - 1.10 ռադիոհանգույց կամ բարձրախոս աշխատունակ վիճակում,
 - 1.11 հյուր թիմի եւ սպասարկող խմբի համար թեյ, հանքային ջուր (միայն պլաստիկ տարաներով),
 - 1.12 հանդիպումն անցկացնելու համար առնվազն 3 գնդակ,
 - 1.13 կողմնակի անձանց մուտքի արգելքը մրցավարական սենյակ, որտեղ գտնվելու իրավունք ունեն միայն հանդիպումը սպասարկող խմբի անդամները եւ տեսուչի կամ մրցավարի թույլտվությամբ արձանագրությունում նշված անձինք:
 - 1.14 բուժ. օգնության և ոստիկանության աշխատակիցների /համազգեստով/ համապատասխան թվակազմի ներկայությունը հանդիպմանը:
2. Հյուրընկալող Ակումբը պարտավոր է ապահովել «հյուր» թիմի և սպասարկող խմբի դիմավորումը և ճանապարհումը, նրանց անվտանգությունը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում աջակցել մասնագիտական գործունեությանը:

Հոդված 13. Հասարակական կարգի և անվտանգության ապահովումը

1. Մարզադահլիճում եւ դրան հարակից տարածքներում խաղից առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը և խաղից հետո հասարակական կարգի պահպանությունն ու անվտանգությունը հյուրընկալող Ակումբը իրականացնում է իրավապահ մարմինների միջոցով:

Հոդված 14. Առաջնության մասնակիցների հայտավորումը և վերահայտավորումը

1. Թիմերում հայտավորվել կարող են միայն այն ֆուտբոլիստները, ովքեր գրանցված են տվյալ ակումբում:
2. Ֆուտբոլիստների գրանցումը կատարվում է ըստ ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի:

3. Թույլատրվում է հայտավորել մինչև 5 ղեկավար և մինչև 20 ֆուտբոլիստ:
4. Մասնակից թիմերի հայտավորման ժամկետը սկսվում է 15 օր և ավարտվում է 3 օր առաջնությունը սկսելուց առաջ:
5. Հայտավորման ժամկետներից հետո փոփոխությունները թիմերում կատարվում են վերահայտավորման միջոցով: 1-ին և 2-րդ փուլերի միջև ընկած ժամանակահատվածում վերահայտավորումները կատարվում են անվճար, մնացած դեպքերում՝ 5000 դրամ մուծելու դեպքում:
7. Որևէ ակումբում գրանցված ֆուտբոլիստը, զինվորական ծառայության մեջ գտնվելու պարագայում, ցանկության դեպքում կարող է /վերա/հայտավորվել մեկ այլ ակումբի թիմում: Այդ ֆուտբոլիստի վերահայտավորումը կատարվում է անվճար: Ակումբների միջև այս խնդրի շուրջ ծագած վեճերի վերջնական լուծումը վերապահվում է ՀՖՖ-ին:
8. Առաջնության ընթացքում մեկ ակումբի թիմից մյուս մասնակից ակումբի թիմ՝ ֆուտբոլիստը կարող է տեղափոխվել 1 անգամ՝ 1-ին և 2-րդ փուլերի միջև ընկած ժամանակահատվածում:
9. Ակումբների ղեկավար եւ վարչական կազմերը վերահայտավորվում են առանց ժամկետային սահմանափակումների:
10. Ակումբը հայտավորման (վերահայտավորման) համար ներկայացնում է՝
 - սահմանված ձևի, լրացված, Ակումբի ղեկավարի կողմից ստորագրված և կնքված հայտավորման (վերահայտավորման) թերթիկ,
 - գումարի փոխանցման /կանխիկ վճարման/ անդորագրի պատճեն,
 - հայտավորվողի անձը հաստատող փաստաթուղթը (անձնագիր կամ զինգրքույկ եւ նրա պատճեն, 15-ից 16 տարեկանների համար՝ ծննդյան վկայականը և նրա պատճեն):
11. Ֆուտբոլիստի կամ պաշտոնյայի հայտից հանելը կատարվում է Առաջնության ընթացքում՝ ակումբի ղեկավարի պաշտոնական նամակի հիման վրա:
12. Ակումբները հայտավորման փաստաթղթերը ՀՖՖ են ներկայացնում գրաֆիկով սահմանված օրերին: Հայտավորման գրաֆիկը խախտելու, ուշացնելու դեպքում նշանակվում է տուգանք՝ յուրաքանչյուր օրվա համար 1000 դրամ:

Հոդված 15. Պարգևատրումը

1. Ֆուտզալի առաջնության հաղթողի եւ մրցանակակիրների պարգևատրումն իրականացնում է ՀՖՖ-ն:
2. Ակումբները ՀՖՖ են ներկայացնում պարգևատրման ենթակա անձանց ցուցակը ոչ ուշ, քան պարգևատրումից 15 օր առաջ:
3. Առաջնությունում՝
 - 3.1. առաջին տեղը գրաված թիմին շնորհվում է 2012-2013թթ. «Ֆուտզալի Հայաստանի Չեմպիոն» կոչումը: Թիմը պարգևատրվում է 1000000 /մեկ միլիոն/ դրամով և ՀՖՖ-ի դիպլոմով: Թիմին է հանձնվում ՀՖՖ-ի փոխանցիկ Գավաթը: Թիմի ֆուտբոլիստները, ակումբի նախագահը, թիմի պետը, գլխավոր (ավագ) մարզիչը, մարզիչները պարգևատրվում են ոսկե մեդալներով և առաջին կարգի դիպլոմներով,
 - 3.2. երկրորդ տեղը գրաված թիմը պարգևատրվում է ՀՖՖ-ի դիպլոմով: Թիմի ֆուտբոլիստները, ակումբի նախագահը, թիմի պետը, գլխավոր (ավագ) մարզիչը, մարզիչները պարգևատրվում են արծաթե մեդալներով եւ երկրորդ կարգի դիպլոմներով,
 - 3.3. երրորդ տեղը գրաված թիմը պարգևատրվում է ՀՖՖ-ի դիպլոմով: Թիմի ֆուտբոլիստները, ակումբի նախագահը, թիմի պետը, գլխավոր (ավագ) մարզիչը, մարզիչները պարգևատրվում են բրոնզե մեդալներով եւ երրորդ կարգի դիպլոմներով,
 - 3.4. Առաջին, երկրորդ եւ երրորդ տեղերը գրաված թիմերի բժիշկները, մերսողները, ադմինիստրատորները պարգևատրվում են ՀՖՖ-ի համապատասխան կարգի դիպլոմներով:
4. Պարգևատրման են ենթակա այն ֆուտբոլիստները, ովքեր իրենց թիմի կազմում մասնակցել են 30% եւ ավելի խաղերի:

5. Փոխանցիկ Գավաթը պահվում է հաղթող ակումբի մոտ բայց հանդիսանում է ՀՖՖ-ի սեփականությունը: Հաղթող ակումբները պատասխանատու են փոխանցիկ Գավաթների համար և պարտավոր են այն ՀՖՖ-ին վերադարձնել տվյալ մրցման պարզևատրումից 10 օր առաջ, գերազանց վիճակում: Գավաթի կորստյան կամ վնասման դեպքում ակումբները պարտավոր են վճարել Գավաթի արժեքի տասնապատիկը:
6. Տարվա լավագույն ֆուտբոլիստը պարգևատրվում է հուշադիպլոմով և հարյուր հազար /100000/ դրամով: Մրցանակակիրը որոշվում է ՀՖՖ-ի մամուլի քարտուղարության հարցմամբ:
7. Առաջնության լավագույն ռմբարկուն պարգևատրվում է «Ոսկե խաղակոշիկ» մրցանակով, հուշադիպլոմով և վաթսուն հազար /60000/ դրամով:
8. Առաջնության մասնակիցների համար ՀՖՖ-ի նախագահի կամ գործադիր կոմիտեի որոշմամբ կարող են սահմանվել նաև այլ պարգևատրումներ:

Հոդված 16. Չկայացած և անավարտ խաղերը

1. Անավարտ կամ չկայացած են համարվում այն խաղերը, որոնք ընդհատվել կամ չեն կայացել հետևյալ պատճառներով.
 - արտակարգ իրավիճակների,
 - լուսավորման համակարգի խափանման (անջատման), որը տեղի է ունեցել ոչ թե հյուրընկալող ակումբի մեղքով, այլ անհաղթահարելի արգելքների հետևանքով, և որը հնարավոր չի եղել վերականգնել 30 րոպեի ընթացքում,
 - թիմի/երի/՝ խաղադաշտը լքելու,
 - երրորդ անձանց միջամտության,
 - խաղի մասնակիցների անվայել վարքագծի,
 - հասարակական կարգի խախտման, որն էապես ազդել է խաղի ընթացքի և արդյունքի վրա,
 - այլ սուբյեկտիվ հանգամանքներ:
2. Եթե խաղը չի կայացել կամ ընդհատվել է անկախ ակումբների կամ նրանց պատասխանատվության տակ գտնվող անձանց կամքից, ապա այն խաղարկվում կամ շարունակվում է մեկ այլ օր ընդհատման պահից, և դրա խաղացված մասի հաշիվը, կարգապահական տույժերը, փոխարինումները մնում են ուժի մեջ (պահպանվում են): Խաղի շարունակությանը մասնակցում են միայն այն ֆուտբոլիստները, որոնք ընդգրկված են եղել խաղի արձանագրությունում: Այդ խաղի անցկացման /շարունակման/ ժամկետների վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը պատկանում է ՀՖՖ-ին:
3. Մյուս դեպքերում խաղի արդյունքը չեղյալ է համարվում: Մեղավոր թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն 0-3 հաշվով իսկ մրցակցին՝ հաղթանակ 3-0 հաշվով: Եթե մրցակցի առավելությունը հաշվի մեջ գերազանցում է 3 գնդակ, ապա խաղի հաշիվը մնում է ուժի մեջ: Եթե անվայել վարքագիծ է դրսևորվել երկու թիմերի ֆուտբոլիստների կողմից, ապա երկու թիմերին էլ գրանցվում է տեխնիկական պարտություն 0-3 հաշվով:
4. Չեղյալ համարված արդյունքների դեպքում գրանցված գուլերը ռմբարկուների հաշվարկում չեն ներառվում, կարգապահական տույժերը մնում են ուժի մեջ:

Հոդված 17. Թիմերի չներկայանալը խաղին կամ հրաժարվելը

Առաջնությանը մասնակցելուց

1. Անհարգելի պատճառով խաղին չներկայանալու, ինչպես նաև ժամանակին խաղահրապարակն անպատրաստ տրամադրելու կամ չտրամադրելու դեպքում մեղավոր թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն 0:3 հաշվով, իսկ մրցակից թիմին՝ հաղթանակ 3:0 հաշվով:
2. Թիմը համարվում է խաղին «չներկայացած», եթե չի տեղեկացրել ուշացման պատճառների մասին և խաղասկզբին չի ներկայացել: Տեղեկացնելու դեպքում խաղասկիզբը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան 30 րոպե:
3. Երկու տեխնիկական պարտության դեպքում թիմը հանվում է առաջնությունից:

4. Թիմի մասնակցությունը կարող է կասեցվել կամ թիմը հանվել առաջնությունից ՀՖՖ Գործկոմի որոշմամբ, եթե թիմը պարբերաբար խախտում է սույն Կանոնակարգը, չի կատարում ՀՖՖ-ի հրամաններն ու որոշումները, իր գործողություններով ոտնահարում է ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի եւ ՀՖՖ-ի հիմնարար սկզբունքները:
5. Եթե Առաջնությունից հանված թիմը մասնակցել է 50%-ից պակաս խաղերի, ապա խաղերի արդյունքները չեղյալ են համարվում: Հակառակ պարագայում անցկացրած խաղերի արդյունքները մնում են ուժի մեջ, իսկ թիմերին, որոնց հետ չեն կայանալու խաղերը, շնորհվում է հաղթանակ` 3:0 հաշվով:

Հոդված 18. Բողոքարկումներն ու բողոքները

1. Բողոքարկումը Ակումբի կողմից ՀՖՖ ներկայացված գրավոր դիմում է, որը նպատակ ունի չեղյալ համարել խաղի արդյունքը և վերախաղարկել այն:
2. Բողոքարկումը ընդունվում է գրանցվում է ՀՖՖ-ում, եթե ակումբի լիազորված անձը (նախագահ, թիմի պետ, գլխավոր մարզիչ) խաղից հետո պաշտոնապես դիմել է տեսուչին` լրացնելով խաղի արձանագրության համապատասխան բաժինը:
3. Բողոքարկման պատճառ կարող են հանդիսանալ`
 - չհայտավորված ֆուտբոլիստների մասնակցությունը խաղին,
 - մրցավարի կողմից կանոնակարգային դրույթների խախտումը/ները/, որը (որոնք) ազդել են հանդիպման արդյունքի վրա,
 - խաղի տևողության հետ կապված անհամաձայնությունը:
4. Բողոքարկման ենթակա չեն մրցավարի կայացրած փաստացի որոշումները.
 - ազատ, տուգանային կամ 6 մ հարված նշանակելը կամ չնշանակելը,
 - գնդակի` խաղահրապարակի սահմաններից դուրս գալու և գնդակը խաղի մեջ մտցնելու իրավունք տալը,
 - դարպասի գրավումը արձանագրելը կամ չարձանագրելը,
 - ֆուտբոլիստին զգուշացնելը կամ խաղահրապարակից հեռացնելը:
5. Բողոքը Ակումբի կողմից ՀՖՖ ներկայացված գրավոր դիմում է, որը խաղը վերախաղարկելու նպատակ չունի եւ ուղղված է խաղի նորմալ ընթացքը խաթարած հանգամանքները քննարկելուն, մեղավոր անձանց պատժելուն և հետագայում նման խախտումներ թույլ չտալուն:
6. Բողոքները` կապված դահլիճի նշագծումների կամ դարպասների չափերի հետ, կարող են ներկայացվել միայն խաղի տեսուչին ոչ ուշ, քան խաղից 40 րոպե առաջ:
7. Բողոքարկումները եւ բողոքները ՀՖՖ ներկայացվում են ոչ ուշ, քան մինչեւ խաղին հաջորդող աշխատանքային օրվա վերջը:
8. Բողոքարկումները քննարկվում են ՀՖՖ-ում 30 000 դրամ մուծելուց (փոխանցելուց) հետո, մեկ շաբաթվա ընթացքում:
9. Մուծված գումարը վերադարձվում է միայն բողոքարկմանը դրական լուծում տալու դեպքում:

Գլուխ 3. ԽԱՂԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Հոդված 19. Սպասարկման իրականացումը

1. Խաղերը կազմակերպելու և վարելու համար ՀՖՖ-ի համապատասխան բաժինը նշանակում է սպասարկող խումբ` մրցավար, 2-րդ մրցավար, 3-րդ մրցավար ժամանակաչափորդ և տեսուչ:
2. Սպասարկող խմբին արգելվում է խաղի մեկնել (վերադառնալ) տվյալ խաղի մասնակից թիմերից որևէ մեկի հետ:
3. Մինչխաղային խորհրդակցությունից առաջ մրցավարը եւ տեսուչը պարտավոր են ստուգել խաղահրապարակի որակը, որի հետ կապված` խաղի անցկացման վերջնական որոշումը կայացնում է մրցավարը:
4. Խաղի տեսուչի բացակայության դեպքում մրցավարը պարտավոր է փոխարինել նրան` կատարելով խաղի կազմակերպման, անցկացման և ավարտի հետ կապված նրա բոլոր գործառույթները:
5. Մրցավարը պարտավոր է արձանագրությունը ներկայացնել ՀՖՖ ոչ ուշ, քան մինչև խաղին հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15:00:

6. Խաղից առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը, խաղից հետո տեղի ունեցած ռուսկարգ դեպքերի մասին մրցավարական խմբի անդամները պարտավոր են ՀՖՖ ներկայացնել զեկուցագրեր ոչ ուշ, քան մինչև խաղին հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:
7. Խաղի կազմակերպման ընդհանուր պատասխանատուն տեսուչն է:
8. Որևէ թիմի՝ խաղից ուշանալու դեպքում, խաղասկզբի և խաղի անցկացման վերաբերյալ որոշումը կայացնում է տեսուչը:
9. Սպասարկող խումբը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները խաղն անցացնելու ամար:
10. Խորհրդակցությանը պաշտոնյաների և/կամ ոստիկանության աշխատակիցների չներկայանալու կամ ուշանալու դեպքում պատասխանատվությունը կրում են ակումբները:
11. Տեսուչը խաղի ընթացքում արտառոց կարգապահական խախտումներ արձանագրելու, ինչպես նաև խաղի վերաբերյալ բողոքարկման պաշտոնական հայտարարության դեպքում խաղից անմիջապես հետո կարող է հյուրընկալող /դաշտի տեր/ թիմի ղեկավարությունից պահանջել հանդիպման տեսագրությունը:
12. Տեսուչը պարտավոր է բողոքարկման մասին անմիջապես տեղեկացնել մրցակից թիմին և ՀՖՖ-ին:

Գլուխ 5. ԻՐԱՎԱՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 20. Վեճերի քննարկումը

1. Ֆուտբոլային սուբյեկտների միջև ծագած վեճերը, համաձայն ՀՖՖ կանոնադրության, քննարկվում և վերջնական լուծում են ստանում՝ ելնելով ՀՖՖ հիմնարար փաստաթղթերի դրույթներից
2. Մրցումների անցկացման հետ կապված այն իրավահարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն կանոնակարգով, ենթակա են կարգավորման ՀՖՖ-ի այլ նորմատիվ փաստաթղթերով, ՀՀ գործող օրենսդրությամբ:

Հոդված 21. Ակումբի (թիմի) անվանափոխությունը

1. Ակումբի անվանափոխությունը կատարվում է համաձայն ՀՀ օրենսդրության: Ակումբը պարտավոր է մեկամսյա ժամկետում գրանցել անվանափոխությունը ՀՖՖ-ում՝ վճարելով 30 000 դրամ:
2. Թիմի անվանափոխությունը կատարվում է ակումբի կողմից ՀՖՖ ներկայացված գրավոր դիմումի համաձայն՝ 30 000 դրամ վճարելուց հետո: Թիմի անվանափոխությունը հաստատում է ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեն:

Գլուխ 6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 24. Թիմերի մասնակցությունը Եվրոգավաթներին

1. Հայաստանի Չեմպիոն թիմը իրավունք է ստանում մասնակցելու 2013-2014թթ. ՈՒԵՖԱ-ի Գավաթի խաղարկությանը:

Հոդված 25. Այլ հարցեր

1. Սույն կանոնակարգի դրույթների խախտումների (չկատարման) համար կիրառվում են պատժամիջոցներ՝ համաձայն ՀՖՖ Կարգապահական կանոնակարգի:
2. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից և գործում է մինչև մրցաշրջանի ավարտը:

ՄԿԱ բաժնի ֆուտզալի և կանանց ֆուտբոլի բաժանմունք

